Ինտերնետի կարիքը և ինտերնետի համար ժամանակ չունենալը՝ միասին 23,8%, կարելի է բացատրել ոչ միայն նախասիրություններով, այլ նաև բնավորության առանձնահատկություններով:

Ինտերնետ կապը անհասանելի է ինտերնետից չօգտվողների 10,3%-ի մոտ:

Իսկ այն, որ ՀՀ-ում ինտերնետից չեն օգտվում հարցվածների 43,1% և հիմնականում խնդիրը համակարգիչ չունենալն ու ինտերնետ կապի թանկ լինելն է՝ միասին 50,8%, շատ մտահոգիչ է:

ԻՆՏԵՆԵՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՏԵՂԻ (ՎԱՅՐԻ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ

Աղյուսակ N° 13, Գծապատկեր N° 47 (Գիրք N° 1, էջ 39):

1273 պատասխաններից 611-ում 48,0% նշվել է տան համակարգչից պատասխանը:

Նոութբուքից օգտվում են 16,4%, աշխատավայրի համակարգչից 11,6%:

Ցավալի է, բայց շատ ցածր է ուսումնական հաստատության համակարգիչներից պատասխանների թիվը՝ 21 կամ 1,6%:

Պատկերն ավելի է հստակենում, երբ դիտում ենք՝

ԻՆՏԵՆՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՏԵՂԻ (ՎԱՅՐԻ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐՆ

ԸՍՏ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹՎԻ

Աղյուսակ N° 14, Գծապատկեր N° 48 (Գիրք N° 1, էջ 40): Ինտերնետից օգտվողների 72,8% նշել է տան համակարգչից պատասխանը, նույնիսկ 24,9%, սմարթֆոնից՝ 12,0%, պլանշետից (iPad, Android, Windows)՝ 11,2%, բջջային հեռախոսից՝ 7,0%: Ստացվում է, որ մեր ազգաբնակչության ինտերնետից օգտվողների 55,1%-ը նախընտրում են շարժական ինտերնետը:

Հարցաշարը տանից օգտվողների համար նախատեսել էր ևս երեք հարց՝

- Բացի Ձեզանից քանի՞ հոգի են տանն օգտվում ինտերնետից
- Քանի՞ համակարգիչ ունեք տանը
- Ի՞նչ տիպի միացում ունեք ինտերնետին

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աղյուսակ N° 15, Գծապատկեր N° 49 (Գիրք N° 1, էջ 41):

Հարցման մասնակից ինտերնետից օգտվողների ընտանիքի անդամների վերաբերմունքն ինտերնետի նկատմամբ բավականին դրական է: 29,1%-ի մոտ ընտանիքի անդամներից ևս 2-ը օգտվում են ինտերնետից, 28,2%-ի մոտ ընդամենը 1-ը:

Բացի իրենից ոչ ոք չի օգտվում՝ 21,7%: Բավականին բարձր՝ 17,6% բաժին է ընկել ընտանիքի անդամներից ևս երեք հոգի օգտվողներին: Եվս չորս և ավելի ընտանիքի անդամների չափաբաժինը կազմում է ընդամենը 3,3%:

Հետաքրքիր պատկեր է արձանագրվել՝ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՏԱՆՆ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ հետազոտության արդյունքում՝

Աղյուսակ N° 16, Գծապատկեր N° 50 (գիրք N° 1, էջ 42):

Ինտերնետից օգտվողների կեսից ավելին՝ 51,1%, տանն ունեն 2 (երկու) համակարգիչ: Երեք համակարգիչ ունեն 3,7%-ը, մեկ համակարգիչ՝ 44,6%: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում (հինգ) համակարգիչ ունենալու փաստը՝ 4 պատասխան, 0,5%:

ԻՆՏԵՐՆԵՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՏԵՂԻ ՉԱՓԱԲԱԺՆՆԵՐՆ

ԸՍՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹՎԻ

Աղյուսակ № 17, Գծապատկեր № 51 (Գիրք № 1, էջ 43)

Կաբելային օպտիկական և անլար (3G/4G) տիպի միացում է նշված մոտավորապես հավասար՝ համապատասխանաբար 19,5% և 19,8% պատասխանների չափաբաժնում, իսկ առաջին տեղում է DSL միացման միջոցով՝ 30,2%: Պատասխանների թվի 16,3% նշված է անլար (WiFi), կաբելային հեռուստատեսային ծառայության հետ 7,6%:

Զարմանալի է, որ Հայաստանյան ինտերնետից օգտվողների շրջանում դեռևս կան Dial-up-ից (հեռախոսային մոդեմից) օգտվողներ՝ 4,1%:

Այժմ՝ ԻՆՏԵՐՆԵՏԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՏԻՊԻ ԲԱՇԽՈՒՄՆ

ԸՍՏ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹՎԻ

Աղյուսակ № 18, Գծապատկեր № 52 (Գիրք № 1, էջ 44), հստակեցնում է պատկերը՝ DSL միացում՝ 32,7%:

Մոտավորապես 21-ական տոկոս անլար (3D/4G) և կաբելային օպտիկա, անլար (WiFi)՝ 17,6%:

Բավականին բարձր գումարային ցուցանիշ է ինտերնետից անլար օգտվողների պարագայում՝ 39,1%:

Իսկ եթե 10,8% գումարային ցուցանիշ ունեցող կաբելային հեռուստատեսության ծառայության հետ և կաբելային լոկալ ցանցերով (Local Network)-ին ավելացնենք կաբելային օպտիկական՝ 21,1%, ապա կստացվի, որ 31,9% ինտերնետից օգտվողներ նախապատվությունը տալիս են կաբելային այս կամ այն միացմանը:

ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՍԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝

Ինտերնետում աշխատող սարքի տեսակի չափաբաժիններն ըստ պատասխանների թվի (Գիրք № 1, Աղյուսակ № 19, Գծապատկեր № 53) և ինտերնետում աշխատող սարքի տեսակի բաշխումն ըստ ինտերնետից օգտվողների թվի (Գիրք № 1, Աղյուսակ № 20, Գծապատկեր № 54).

Պատասխանների 59,8% և օգտվողների 89,2%-ը որպես սարք նշել ն Desktop-ը: Notebook/Netbook-ը որպես սարք նշվել է 18,1% պատասխանների և 27,1% օգտվողների դեպքում:

Դիտարկման է արժանի նաև այն փաստը, որ պատասխանների (1252), և օգտվողների (839) գործակիցը՝ K=1252:839, կազմում է 149,2%, որն ենթադրում է ինտերնետի, կոնկրետ մեկ օգտվողի հնարավորությունների բազմազանության (Desktop, Notebook/Netbook, պլանշետ, սմարթֆոն և այլն):

Պատասխաններում, ինչպես որտեղից ենք միանում ինտերնետին, այնպես էլ ինտերնետում աշատող սարքի վերաբերյալ ուրախալի է, որ Desktop-ի հետ համատեղ պատասխանների մոտավորապես 33%-ի մոտ նշված է նաև կամ Notebook/Netbook կամ պլանշետ, սմարտֆոն, բջջային:

Իսկ պլանշետից և սմարտֆոնից, համապատասխանաբար 14,7% և 11,4% օգտվողների գումարային արդյունքը՝ 26,1% համարյա հավաստվել է Notebook/Netbook-ներից օգտվողների՝ 27,1%-ին:

Փոքր չէ նաև բջջային հեռախոսների 6,9% չափաբաժինը:

ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ ԱՆՑԿԱՅՐԱԾ ՄԻՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

Գիրք № 1, Աղյուսակ № 21, Գծապատկեր № 55 (էջ 47):

Առաջին տեղում է երեքից վեց ժամ՝ 3-6 ժամանակահատվածը՝ 32,9%: Վեց ժամից ավելի ինտերնետում իր ժամանակն է անցկացնում օգտվողների 27,1%, 1-3 ժամ 23,1%:

Ինտերնետում օրվա մեջ կարճ ժամանակահատված՝ մեկ ժամից ոչ ավելի անց է կացնում օգտվողների 16,9%:

Այն, որ ինտերնետում երեք ժամից ավելի ժամանակահատված անցկացնում է օգտվողների 60,0%-ը և ուրախալի է և մտահոգիչ: Այստեղ ավելի շատ ինչպես մասնագետների, այնպես էլ հոգեբանների բացատրություն ենք ակնկալում: Օրվա ակտիվ ժամանակահատվածի 37,5-ից 62,5 տոկոսը ինտերնետում, հիմնականում 23-ից 45 տարեկան բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ:

ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ (ԻԾՄ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

շուկայում ըստ պատասխանների թվի՝ (Գիրք № 1, Աղյուսակ № 22, Գծապատկեր № 48) և ԻԾՄ ներկայությունը շուկայում ըստ օգտվողների թվի (Աղ. № 23, Գծ. № 49)

Առաջնությունը ԻԾՄ-ների Bee-line օպերատորինն է՝ պատասխանների 28,4% և օգտվողների 36,0 բավականին բարձր ցուցանիշով: Ընդ որում, միայն լարային միացման պարագայում Bee-line-ի չափաբաժինը՝ օգտագործողների 24,0% գերազանցում է Vivacell-MTS (անլար) 21,1% չափաբաժնին:

Orange (անլար) ԻԾՄ-ի ցուցանիշը՝ 19,3% գալիս է փաստելու, որ 3-րդ օպերատորը բավականին լուրջ ակնկալիքներ ունի կապված ինտերնետ շուկայի զարգացումների հետ:

Այն, որ Ucom ԻԾՄ-ի ցուցանիշը՝ 10,8%, չնչին, սակայն արդեն գերազանցում է ինտերնետից օգտվողների մոտ լուրջ վստահություն ներշնչող Arminco ընկերության ցուցանիշը՝ 10,5%, փաստում է այն հսկայական ներդրումների չափի մասին, որն իրականացնում է Ucom-ը:

Հարցումները ցույց տվեցին, որ Ucom ինտերնետ կապը այժմ հասանելի է նաև Կոտայքի և Արարատի մարզի բնակչությանը:

Մոտավորապես հավասարաչափ՝ 5,6-ից 7,8% չափաբաժիններ ունեն շուկայում Web, Netsys, Cross և Fast Net ԻԾՄ-ները:

Այլ ԻԾՄ-ներից օգտվում է ինտերնետ օգտվողների 3,8%-ը:

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ

ՓԱԹԵԹՆԵՐԻ (ՄԲ/վրկ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

Գիրք № 1, Աղյուսակ № 24, Գծապատկեր № 58 (էջ 50):

Ինտերնետից օգտվողների մոտ կեսը՝ 47,9% նախապատվությունը տալիս են 1,0-4,0 Մբ/վրկ արագությանը:

Երկրորդ տեղում է 8,1-16,0 արագությունը՝ 21,0%:

Մոտավորապես նույնատիպ չափաբաժիններն ունեն 16,1-24,0 և 4,1-8,0 Մբ/վրկ արագության ինտերնետ փաթեթները, համապատասխանաբար՝ 14,9% և 14,3%:

Այլ՝ 1,0-ից ցածր և 24,0 Մբ/վրկ-ից բարձր տիրույթից դուրս որպես նախընտրելի արագություն նշել են ինտերնետից օգտվողների ընդամենը 1,9%-ը:

ՄԵԿ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՄՊԱՌԱԾ

ԾԱՎԱԼՆԵՐԻ (ԳԲայթ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

Գիրք № 1, Աղյուսակ № 25, Գծապատկեր № 59 (էջ 51):

48,9% այսպիսի ցուցանիշ է արձանագրել՝ 1,1-10,0 GB ծավալներ սպառողների պարագայում:

10,1-100,0GB սպառում է ինտերնետից օգտվողների 20,2%-ը,

501,0-1000 MB՝ 16,1%:

Մինչև 10,0 MB և 100,1 ԳԲ-ից 1,0 TB ծավալ օգտագործում են 13,4% ինտերնետ օգտագործողներ՝ համապատասխանաբար 8,6% և 4,8%:

Այլ ծավալներ նշված են միայն 1,4% ինտերնետից օգտվողների մոտ:

ԸՆՏԱՆԻՔԻ ՄՅՈՒՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԼԱՐ ՔԱՐՏԻՑ ՕԳՏՎԵԼԸ

Գիրք № 1, Աղյուսակ № 26, Գծապատկեր № 60 (էջ 26):

Հարցաշարը ենթադրում էր երկու պատասխան՝ այո և ոչ:

Մեր հայրենակիցներից այն ինտերնետ օգտագործողները, ովքեր ունեն անլար քարտ՝ 76,8% չափաբաժին, նշում են, որ տրամադրում են իրենց անլար քարտերը ընտանիքի այլ անդամների նույնպես, որը շատ համահունչ է հայ ընտանիքների խառնվածքին:

Իսկ 23,2% չափաբաժին և անլար քարտ ունեցողների պարագայում հավանական է, որ գերակշիռ մասի մոտ ընտանիքի այլ անդամները ուղղակի ցանկություն չեն ունեցել օգտվել համացանցից:

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԾ ՓՆՏՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԿԱՅՔԵՐԻ) ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

Ինչպես երևում է Աղյուսակ № 27 և Գծ. № 61-ից (էջ 4) հարցաթերթիկում ներառված էր երեք պատասխան՝ Google, Yandex և Այլ:

Google-ի առաջնայնությունը անվիճելի է՝ 77,4%, իսկ Yandex-ի հավաքած 11,8%-ը ավելի բարձր, քան հայաստանյան շուկայում հայտնի մնացած համակարգերինը միասին վերցրած՝ 10,8%:

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇ ՀԱՆՐԱՀԱՅՑ ԿԱՅՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ (ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹՎԻ ԵՎ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԹՎԻ)

Հարցաթերթիկում ներառված էին հինգ կայք և վեցերորդ Այլ պատասխանի հնարավորություն (Աղ. № 28, Գծ. № 62, էջ 5 և Աղ. № 29, Գծ. № 63, էջ 6)

Youtube-ի 28,6% չափաբաժինը ինտերնետից օգտվող 839 մասնակիցների 2777 պատասխանների պարագայում ավելի է ընդգծվում, երբ դիտարկում ենք բաշխումն ըստ օգտվողների թվի՝ 94,6%:

Հետաքրքիր է, որ Yahoo-ն դեռևս պահպանում է իր ազդեցությունը ինտերնետից օգտվողների շրջանում՝ 25,3% ըստ պատասխանների թվի և 83,7% բաշխումն ըստ օգտվողների թվի:

Wikipedia-ն երրորդն է, նկատելի առաջ անցնելով Amazon-ից՝ 22,7% 2777 պատասխանների մեջ (630 պատասխան):

Այլ պատասխանների 4,2% չափաբաժինը ավելի բարձր է, քան ցանկը եզրափակող Bitorrent Network-ը՝ 3,0%:

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

Այն, որ ինտերնետում սոցիալական ցանցերի դերը հատուկ քննարկման առարկա է և քաղաքագետների, և սոցիոլոգների, և հոգեբանների մոտ, միանշանակ է: Այդ առումով շատ հետաքրքրական էր Հայաստանյան ինտերնետ օգտվողների վերաբերմունքի գնահատականը սոցիալական ցանցերի վերաբերյալ:

Youtube՝ 23,1% (87,0% ինտերնետից օգտվողների մոտ) Ադյուսակներ 30, 31 և Գծապատկերներ 64 և 65 (էջ 7, 8):

Youtube-ը առջևում է, դա լավ է, թե վատ, կգնահատեն մասնագետները, իսկ երկրորդ և երրորդ տեղում են Odnoklassniki-ն՝ 21,5% ըստ պատասխանների թվի և 81,1% օգտվողների մոտ և հանրահյոս Facebook-ը համապատասխանաբար 19,8% և 74,7% չափաբաժիններով:

Ինչպես երևում է հարցման արդյունքներից, այս եռյակը նկատելիորեն առաջ է անցել Հայաստանում հեղինակություն կամ ժողովրդականություն դեռևս չվայելող Twitter-ից՝ 7,1% և 26,9% չափաբաժին: Հատկանշական է, որ Twitter-ին իրենցից ետ են թողել Linkendin In և Vkontakte-ն՝ 7,7% և 7,4% չափաբաժիններով:

□Այլ□ պատասխանների 7,8% չափաբաժինը բավականին բարձր է և կազմում է 29,7% ինտերնետից օգտվողների թվի տեսանկյունից: Կարելի զգալ եզրահանգման, որ հարցաթերթիկում նշված ութ սոցիալական կայքերից բացի կան ևս մի քանիսը, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայաստանյան ինտերնետ օգտվողների մոտ:

ԻՆՏԵՐՆԵՏԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարցաթերթիկում ամենամեծ տեղը հատկացված էր հենց այս բաժնին: Ինտերնետի թափանցման, սոցիալական կայքից օգտվելու հարցերից հետո հարցման մասնակիցների մոտ այն նկատելի աշխուժություն էր առաջացնում: Այն, որ 839 ինտերնետից օգտվողներ տվել են 7154 պատասխան, ցույց է տալիս նրանց հետաքրքրությունների լայն շրջանակը:

Ադյուսակներ 32, 33 և Գծապատկերներ 66, 67 (էջ 9-12)

Չեմ կարող ասել դա սպասելի էր, թե ոչ, սակայն առաջին տեղում են “Նորությունները”՝ 7,7% ըստ պատասխանների թվի և 65,7% ըստ օգտվողների թվի: Իսկ “Շփում սոցիալական ցանցերում”՝ 7,0% և 59,7%՝ երկրորդ ամենահաճախ ընդգծված պատասխանն է:

“Չաթ կամ մեսենջեր”, “Երաժշտություն”, ”Կինո-վիդեո”. այս եռյակը թեև մի փոքր ետ է մնում նորություններ և շփում սոց. ցանցերում պատասխաններից, սակայն որոշակիորեն առաջ է անցել “Էլեկտրոնային փոստ”՝ 5,6% և 47,6% “Ֆոտոնկարների փոխանակում”՝ 5,0% և 42,6%, “Համակարգիչների կամ ծրագրային ապահովման նորոգման տեղեկատվության որոնում”՝ համապատասխանաբար 4,7% և 39,7%, “Աշխատանքի որոնում”՝ 4,6% և 39,0% պատասխաններից:

Ուրախալի է, որ հաջորդ բարձր տեղում են “Գիտական տեղեկատվության որոնումը”՝ և “Դասերը (e-learning)”՝ 4,4; 4,3 և 37,4; 36,6 տոկոս չափաբաժիններով:

Ընդհանուր առմամբ “նախասիրությունները” հատուկ ուսումնասիրության օբյեկտ է: Այն վեր է հանում հասարակության հետաքրքրությունների ողջ սպեկտրը, շրջանակը:

Հաջորդ տեղերում են իրարից չնչին տարբերությամբ “Մարքավորումների գների որոնումը”, “Ֆայլերի բեռնումը”, “Զվարճանքը”, “Մասնակցությունը բլոգներում և ֆորումներում”, “Տուրիզմը”:

“Ծանոթություններ”՝ համապատասխանաբար 3,5% պատասխանների թվի, 29,8% օգտվողների մոտ և ամենացածր ցուցանիշը ցույց տված “Եղանակի տեսությունը”՝ 2,1% և 18,2%, որի արդյունքը բավականին ետ է մնում ինտերնետից օգտվելու նպատակը՝ “Այլ” հարցադրումից. այն հավաքել է բավականին բավականին բարձր՝ համապատասխանաբար 2,8% և 23,9% ցուցանիշ, մատնանշելով, որ ինտերնետից օգտվողների շրջանում կան նաև այլ նախասիրություններ ևս, որոնք չէին ընդգրկվել հարցաթերթիկում: Մասնավորապես, այնպիսիք, ինչպիսիք են բանկային, արժույթի փոխանակման, ցավոք նաևբացահայտ “Էրոտիկ” կայքերի նկատմամբ հետաքրքրությունը (այս ամենի մասին վերջում՝ “Ի՞նչ տիպի կայքեր կուզեիք, որ լինեն” և “Եզրահանգումներ” բաժիններում):

ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ (ՏԻՐՈՒՅԹԻ)

ԻՆՏԵՐՆԵՏ ԴՈՄԵՆՆԵՐ

Աղյուսակներ 34, 35, գծապատկերներ 68 և 69-ից (էջ 13, 14) պարզորոշ երևում են, որ Հայաստանյան ինտերնետից օգտվողների մոտ գերիշխում են .am-ը, որը թերևս չնչին, սակայն առաջ է անցել .com-ից՝ համապատասխանաբար 22,7% և 83,1% .am-ի և 22,3% և 82,0% .com-ի պարագայում (ըստ պատասխանների թվի և ինտերնետից օգտվողների թվի):

.ru-ն երկրորդն է, 17,4% և 64,0% ցուցանիշով:

.net-ը մի փոքր առաջ է անցել .org-ից, համապատասխանաբար 8,6% և 31,4% և 7,8% և 28,7%:

Մի փոքր ետ է մնում .info-ն՝ 6,2% ըստ պատասխանների թվի և 22,5% ինտերնետից օգտվողների մոտ:

.biz-ը ևս որոշակի հետաքրքրություն է ներկայացնում՝ 5,2% և 19,1% ցուցանիշներով:

.co-ի ցուցանիշն այլ տիրույթի (երկրների) դոմենային անվանումների հետ համակցված կազմում է համապատասխանաբար 4,7% և 17,2%:

Ըստ պատասխանների թվի մեկ տոկոսին մոտ ցուցանիշ ունեն .fr-ը (0,9%), .us-ը (0,8%), .ua-ն (0,7%):

Այս ինտերնետ տիրույթներից օգտվում են 10,0% ինտերնետից օգտվողներ՝ 2,7% ըստ պատասխանների թվի, որը նույնպես շատ ուրախալի է և խոսում է մեր հայրենակիցների հետաքրքրությունների լայն շրջանակի մասին:

ԻՆՏԵՐՆԵՏ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԼԵԶՈՒՆ

Սա նույնպես շատ կարևոր ուսումնասիրություն է և թերևս ետ սովետական շրջանի հետաքրքրություն ներկայացնող և չուսումնասիրված թեմաներից թեմաներից մեկը: Աղյուսակ 36 և 37, Գծապատկերներ 70, 71 (էջ 15,16):

Միանշանակ չէ այն, որ հայերենը առջևում է՝ 32,3% ըստ պատասխանների թվի և 86,1% ըստ ինտերնետից օգտվողների թվի:

Արդյո՞ք դրա պատճառը այլ լեզուների չտիրապետելն է, որն իհարկե այլ ուսումնասիրության առարկա է, իսկ երկրորդ տեղում Անգլերեն լեզվի հայտնվելը՝ շրջանցելով Ռուսերենին (չնայած շատ չնչին) որոշակի մտորումների է հանգեցնում:

Եվ այսպես, Անգլերեն՝ 28,1% ըստ պատասխանների թվի և 74,7% ինտերնետից օգտվողների մոտ:

Ռուսերեն՝ համապատասխանաբար 26,1% և 69,4%:

Կայքերն են մեղավոր, թե այլ խորքային պատճառ կա, սակայն, ցավոք, ռուսերենի նկատմամբ հետաքրքրությունը նվազել է:

Իսկ ուրախալի է, որ 13,5% չափաբաժին (36% ինտերնետից օգտվողներ) նախընտրում են նաև այլ լեզուներ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻՐՄԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հարցաշարը ենթադրում էր երկու պատասխան՝ “Այո” և “Ոչ”:

Աղյուսակ 38, Գծապատկեր 72 (էջ 17)

Ցավոք, գերիշխող է “Ոչ” պատասխանը՝ 92,3%:

Ֆիրմային կամ անձնական կայք ունեն ընդամենը հարցմանը մասնակցած՝ 1520 ռեսպոնդենտներից, 839 ինտերնետից օգտվողներից միայն 65-ը՝ 7,7%:

Այս մասին նույնպես ավելի մանրամասն եզրահանգումներում:

ԿԱՅՔԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ (hosting)

Լուրջ հարցադրում և ցավոք ածանցյալ ուսումնասիրություն, որն իր մեջ ներառում էր ընդամենը 65 կայք ունեցողներ (հետազոտության ընդամենը 7,7%):

Չնայած որոշակիորեն ընդգծում է հայաստանյան կայքերի տեղակայման վայրի՝ hosting-ի վիճակը՝

Ռուսաստան՝ 26,1%, Ամերիկա՝ 27,7%, Եվրոպա՝ 20,0%, Հայաստան՝ 15,4%:

Սա նույնպես մասնագիտական լուրջ հետազոտության թեմա է, որտեղ ներառվում են և քաղաքական, և անվտանգության, և տնտեսական, և գնային բաղադրիչները և մատնանշում ճիշտ ուղղորդված գովազդի բացակայություն Հայաստանյան ինտերնետ շուկայում:

Հարցաշարում ևս երեք հարցադրում՝

- “Ո՞ր հայկական կայքերն են նախընտրում” և
- “Ինչու՞”
- “Ի՞նչ տիպի կայքեր կուզենայիք, որ լինեն .am տիրույթում”, նախանշված էին ռեսպոնդենտների կողմից որպես չուղղորդված՝ նշված ենթադրելի, հավանական պատասխանների շարք, այլ ենթադրում էին համառոտ շարադրանք:

Ո՞Ր ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՆ ԵՔ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՎ ԻՆՉՈՒ՞

Այն, որ հայկական կայքերի բազմազանության մեջ հարցման մասնակիցները նախապատվությունը տվել են լրատվական՝ նորություններով լի կայքերին, ենթադրելի էր: Այս

արտահայտությունն է Հայաստանյան ինտերնետից օգտվողների որոշակի տրամադրվածության մասին դեպի օպերատիվ տեղեկատվություն:

Հեռուստատեսության ու զանգվածային լրատվամիջոցներից մամուլը՝ թերթեր, ամսագրեր, օպերատիվության իմաստով զգալիորեն զիջում են ինտերնետին: Այստեղից էլ այն բազմաթիվ և բազմերանգ լրատվական կայքերի շարանը, որոնց և նախապատվություն են տալիս մեր հայրենակիցները:

Տարիքային և կրթական տարբեր ցենզ ունեցողների մոտ այն որոշակիորեն տարբերվում է: Հատկանշական է, որ 61-ից բարձր տարիքային խմբի հարցվածները իրենց պատասխաններում news.am-ի, blognews.am-ի, asekos.am-ի և նմանատիպ մի շարք կայքերի կողքին առանձնացրել էին նաև պաշտոնական president.am-ը, armenpress.am, mfa.am, edu.am, mes.am, mineconomy.am և armstat.am կայքերը:

Չնայած ինտերնետ օգտագործողների “Նախասիրությունները” բաժնի հանգամանակից և մանրամասն վերլուծությանը, նպատակահարմար ենք համարում ներկայացնել հարցաթերթիկներում առավել հաճախ՝ 25 և ավել անգամ (մոտավորապես 3 % գերազանցող) նշված հայկական “.am” տիրույթում գործող կայքերի ցանկը՝

news, asekos, lin, blognews, bravo, hottv, mediamail, slaq, hayojax, mamul, realmadrid, lragir, 168, hrarak, tert, edu, azatutyun, a1plus, hip-hop, auto, police, estate, operativ, b24, hetq, banks, gov, igind, job, mfa, arlis, dominoeffect, aravot, spyur, mes, rate, port, list, kamoblog, 7or, myyerevan, aysor, ashxatanq, online-tv, hr, ittrend, beeline, shanttv, armsport, mobilcentre, tezz, hayland, network, infomama, megabit, golos, armeniainfo, loveyou, panorama, myrealt, bagretour, cosmopolitan, heqiat, armchess, mineconomy, hayshuka, mail, nkar, mocak, impoqrik, civilnet, galatv, ittrend, sas, realt, noravank, mts, datalex, chiam, kurs, genproc, e-learning, hdm, avproduction, aperik, mobile, idram, price, speedtest, mykitchen, menu, interactive, merojax, barevhayer, zigzag, mediamall, aybschool, fe-arsenal bbmedia, armenpress, circle, fastnet, president, mynotebook, kino, globalinfo, panarmenian, meteo-tv, armbanks, mail, vannet, blogsport, lbc, currency, goods, viva, biglemon, freeshop, moby, amsagir, jewellery, books, megabit, taxinfo:

Որոշակի հետաքրքրության է արժանի նաև դիտարկել այն կայքերի ցանկը, որոնք թեև □.am□ տիրույթում չեն, սակայն մեծ լսարան ունեն և բավականին հաճախ են նշվել Հայաստանյան ինտերնետ օգտագործողների հարցաթերթիկներում՝

ա) .com տիրույթ

hamovhotov, lurer, adibudi, barevhayer, hamovhayer, nameg, armscoop, panarmenian, kargin-hayer, erkusov, uzood, merkino, hamovnur, jamanc, hetarmenie, armcatalog, shamshyan, armfootball, armmenu,

բ) .ru տիրույթ

acher, photolunch, regnum, hayshuka, ekhpayrutyun, hetaqrqir, novostink,

նշվել են նաև radiovan.fm, hayazg.info, hywikipedia.org, wolarm.org, armenianhouse.org, armblog.net, panarmenian.net:

**ԻՆՉՈՒ՞ ԵՔ ՆԱԽԸՆՏՏՐՈՒՄ ԱՅՂ ԿԱՅՔԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉ ՏԻՊԻ ԿԱՅՔԵՐ
ԿՈՒՋԵՆԱՅԻՔ ԼԻՆԵՆ “.am” ՏԻՐՈՒՅԹՈՒՄ**

Վերևում մի փոքր անդրադարձանք «լրատվական» կայքերին: Հետխորհրդային շրջանի երկրներում, ինչպիսին է նաև Հայաստանը, դեռևս պահպանվում է քաղցր թարմ, օպերատիվ, ճշմարտահավատ լուրերի նկատմամբ: Այստեղից էլ այն պատասխանները, թե ինչու նախապատվությունը մեր հայրենակիցները հիմնականում տալիս են լրատվական կայքերին:

Հետաքրքիր է նաև այն, որ մեր հարցաթերթիկում հինգ, յոթ, անգամ 10 լրատվական կայք է նշված: Ցավոք, սա փաստում է լրատվական դաշտի նկատմամբ անհավատության մթնոլորտը. նույն լուրի, տեղեկատվության ստուգումը մի քանի նմանատիպ կայքերում: Այդտեղից էլ այն սնկի պես բուսնող տասնյակ կայքերի առկայությունը, որոնք սև փիառի, ոչ հավաստի լուրերի, սկանդալների օգնությամբ գրավել են ինտերնետ լսարանի ճնշող մասը:

Ժամանցային կայքերը՝ հիմնականում երգեր, տեսահոլովակներ, ֆիլմեր, նույնպես զգալի լսարան ունեն մեր հայրենակիցների շրջանում: Մեծ է ցանկությունը “.am” տիրույթում տեսնել գիտահանրամատչելի, գիտական հիմնավորումներով կայքեր:

Քաղց կա նեղ մասնագիտական, որոնողական, տեղեկատվական, կանաց հիմնախնդիրները արծարծող կայքերի նկատմամբ:

Ցանկությունների մեջ նշվում է նաև հայկական, հայալեզու Google, Wikipedia տեսնելը, հավատ ներշնչող online առևտրի կայքերի գործարկումը:

Նեղ մասնագիտականների հետ նշվում են ծրագրավորման, վեբ դիզայնի, ֆլորիստիկայի, բժշկության այս կամ ճյուղին վերաբերվող հայկական և հայալեզու կայքերի ակտուալությունը:

Քիչ չեն նաև զուտ կանանց, նրանց հիմնախնդիրներին, կոսմետիկային, արդուզարդին նվիրված կայքերի նկատմամբ հետաքրքրվածությունը:

Ցանկությունների մեջ հատկանշական է թարգմանաչական ծրագրերով կայքերի նկատմամբ հետաքրքրությունը: Հատկապես՝ **երգերը հայերեն թարգմանելու հնարավորություն ունեցող կայքեր:**

Մեծ սեզմենտ է զբաղեցնում նաև բազմաբնույթ և հավաստի մասնագիտական կողմնորոշմամբ սարքավորումների, սպորտային հանդերձանքի, համակարգչային ապարատուրայի, բիժուտերիայի, արձաթյա զարդերի, կոսմետիկայի գներ պարունակող կայքեր տեսնելու ցանկություն ունեցողների թիվը:

Գործող կայքերի նկատմամբ, հատկապես ավտոմեքենաների գներ, ծառայությունների որոշակի տեսակներ, աշխատանք, մեծ թերահավատություն կա: Նրանք նշում են, որ ոչ բարեխիղճ գովազդի հետևանքով կորցնում են ահռելի ժամանակ և նյարդեր:

Այստեղից էլ հիմնական կողմնորոշումը դեպի գրեթե ոչինչ չպարտավորեցնող ժամանցային կայքեր:

Skype-ի, ինչպես նաև համակարգիչ և ինտերնետ ունենալու ցանկությունը մարզերի ազգաբնակչության մոտ, ցավոք, արտագաղթած բարեկամներին, ազգականներին տեսնելն ու շփվելն է նրանց հետ:

Իսկ քաղաքաբնակների մոտ որոշակի նվազել է հետաքրքրությունը Skype-ի նկատմամբ: Այդտեղից էլ յուրօրինակ ցանկություն տեսնել միայն հեռախոսային, հեռաձայնային հնարավորություն ընձեռնող կայքեր:

Որոշակի հետաքրքրություն կա նաև հոգևոր ուղղվածության կայքերի նկատմամբ: Կան նաև ցանկություններ տեսնել կայքեր, որտեղ ժամանակի ռեալ պահին հնարավոր է ստանալ մաքսիմում տեղեկատվություն՝ ժամանակի, լուրերի, արժույթի, եղանակի, ինքնաթիռների, քաղաքային տրանսպորտի շարժի մասին:

Մեր հայրենակիցներին հոգնեցնում են շատ ծանրաբեռնված, հիմնականում իրենց խոսքով օանմակարդակ, վիրուսակիր, էժանագին, սկանդալային կայքերի առկայությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ՝ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով վերլուծության արդյունքները՝ կարելի է փաստել, որ այն իր մեջ ներառում է ոչ միայն ՀՀ-ում ինտերնետի թափանցումն ու կիրառումը, ինտերնետ օգտագործողների բաշխումը ըստ մարզերի, տարիքի, սեռի, ԻԾՄ-ների, ընտանիքների, նախասիրությունների, սոցիալական ցանցերի նկատմամբ ունեցած հետաքրքրության, ինտերնետին միանալու միջոցի համակողմանի սոցիոլոգիական **Հետազոտությունների փաթեթ**, այլ որոշակիորեն

ներկայացնում է նաև Հայաստանի դեմոգրաֆիկ պատկերն արտացոլող, ապագայում ինտերնետ օգտագործողների, ներառյալ պոտենցիալ սպառողի, վարքագիծը, մրցակցային շուկայի, գնագոյացման մեխանիզմների, վաճառքի մարտավարության, գովազդային միջոցների ընտրության, մեծ հաշվով ամեն ինչ Հայաստանի ազգաբնակչության՝ ինտերնետ շուկայի սպառողների յուրօրինակ **Շտեմարան:**

Հետազոտությունների արդյունքում արձանագրվել է հետազոտության հիմնախնդիրը՝ ՀՀ-ում ինտերնետի թափանցման և կիրառման չափերն ու ծավալը.

ՀՀ – 56,9%

Երևան – 60,5%

Մարզեր – 48,0%

Երկրի դեմոգրաֆիկ, սոցիալ-տնտեսական, տեխնիկական, գնային առանձնահատկությունները ինտերնետ օգտվողներին կողմնորոշում են հիմնականում օգտվել այսօրվա չափանիշներով ոչ այնքան բարձր՝ **1,0 – 4,0 Մբ/վրկ ինտերնետի արագությունից:**

Սպառած ծավալները նույնպես բարձր չեն, հիմնական սեգմենտը 1,1 – 10,0 Գբ տիրույթում է:

Արձանագրվել են նաև **ինտերնետի բաշխումն ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների** (Գիրք N 1, էջ 16-20), **ըստ մարզերի** (Գիրք N 1, էջ 21-25):

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի 74,0% ինտերնետի թափանցումն ու Նուբարաշեն, Էրեբունի վարչական շրջանի 41,2% և 45,7% ինտերնետ օգտվողների չափաբաժինը խորհելու տեղիք է տալիս:

Հատկանշական է, որ **ինտերնետից չօգտվելու պատճառի** (Գիրք N 1, էջ 38) ուսումնասիրության արդյունքները դիտարկելով՝ կարող ենք տեսնել, որ մեր ազգաբնակչության միայն 10,2%-ն է նշել ինտերնետ կապի անհասանելիությունը:

Ցավոք, **հիմնական շեշտադրումը դրվել է Համակարգիչ չունենալու և ինտերնետ կապի թանկ (մատչելի) չլինելու** հանգամանքների վրա, համապատասխանաբար՝ 26,9% և 23,9 %:

Մարզերում արձանագրված ինտերնետի թափանցման **միջինացված 48,0%** նույնպես ուրախալի չէ: Քանի որ համադրելով այդ թվացյալ բարձր ցուցանիշը այլ՝ **տարիքային, մասնագիտական և ամենակարևոր՝ Նախասիրություններ** ուսումնասիրության արդյունքների հետ, ստանում ենք **ոչ այնքան ուրախալի պատկեր: Մեր հանրապետության**

մարզերի բնակչության մի ճնշող մասը ինտերնետից օգտվում է արտագաղթած բարեկամներին, հարազատներին, ընտանիքի անդամներին տեսնելու, շփվելու կարիքից դրդված: Արձանագրվել են նաև յուրօրինակ, սակայն, ցավալի փաստեր, երբ Արագածոտնի և Տավուշի հինգ ինտերնետից օգտվողներ փաստել են, որ վաճառել են կով, ավտոմեքենա, անգամ հողատարածք՝ համակարգիչ, հիմնականում նոութբուք, գնելու և Skype-ով երեխաների և ամուսնու հետ շփվելու համար:

Այդտեղից էլ մարզերում արձանագրված ինտերնետի սպառման ոչ մեծ ծավալները, որոնք միջինացված տեսքով որոշակիորեն իջեցրել են հանրապետության ինտերնետից օգտվողների սպառած ծավալները:

Այն, որ ինտերնետից օգտվողների 33,8%-ը 31-ից 45 տարեկանները սեզմենտում է, կարծում ենք, որ դրական միտում է: Սակայն որոշակիորեն մտահոգում է 61-ից բարձր տարիքի անձանց 5,8% ցուցանիշը:

Գումարային տեսքով 18-ից 30 տարեկանների մոտ ցուցանիշը՝ 32,9%, կարելի է գնահատել բավարարից մի փոքր ցածր, համադրելով 46-60 տարեկանների 22,8% ցուցանիշի հետ:

Վերը շարադրվածը համադրելով ինտերնետի թափանցումն ըստ տարիքային խմբերի Գծապատկերներ N 31-ի հետ (Գիրք N 1, էջ 28) ստանում ենք ուշագրավ պատկեր՝

Միայն 31-45 տարիքային խմբի ցուցանիշը՝ 67,1% և 22-30 տարիքային խմբի 60,0% ցուցանիշն է, որ գերազանցում է Հայաստանի միջինացված ինտերնետի թափանցման արդյունքը՝ 56,9%:

Իսկ սեռերի բաշխումն երևի թե կանխատեսելի էր՝

Արական՝ 59,8%,

Իգական՝ 53,5%

Ըստ կրթության (մասնագիտության) թափանցման հիմնական սեզմենտը բարձրագույն-տեխնիկական և բարձրագույն-հումանիտար կրթություն ունեցողներն են՝ համապատասխանաբար ըստ հարցման մասնակիցների՝ 24,4% և 23,6%, իսկ ըստ ինտերնետից օգտվողների՝ 33,1% և 26,8% (Գիրք N 1, էջ 31):

Սա համադրելով ՀՀ-ում ինտերնետի թափանցման միջինացված՝ 56,9%-ի հետ ստացվում է, որ միջին-մասնագիտական կրթություն ունեցող անձինք նույնպես մի փոքր գերազանցում են՝ 58,7%, ՀՀ միջին թափանցման ցուցանիշը՝ 56,9%:

Այն, որ ինտերնետից օգտվողների **հիմնական մասը օգտվում են տան համակարգչից**, կանխատեսելի էր (72,8%):

Ցավալի էր, որ ուսումնական հաստատության համակարգչից օգտվում է ըստ պատասխանների թվի 1,6% կամ 2,5% ինտերնետից օգտվողներ (Գիրք N 1, էջ 40):

Նոութբուքների տարածման աճը ՀՀ-ում որոշակիորեն դանդաղեցրին սմարթֆոնները և պլանշետները (iPad, Android, Windows): Երևի թե ցանկալի էր պլանշետները նույնպես տարանջատվեր և բաշխումն արձանագրել ըստ տիպերի: Ինչևէ, նոութբուք՝ 24,9%, Աշխատավայր՝ 17,6%, Սմարթֆոն՝ 12,0%, Պլանշետ՝ 11,2%:

Բջջային հեռախոսի ցուցանիշը նույնպես որոշակիորեն նվազել է (7%), ըստ պատասխանների՝ պատճառը էկրանի փոքր չափսերն են:

Հայաստանի ազգաբնակչության դեմոգրաֆիկ պատկերի որոշակի արտացոլումն է **Երևանից օգտվողների ընտանիքի մյուս անդամների վերաբերմունքն ինտերնետի նկատմամբ** ուսումնասիրությունը՝

Իրենցից բացի ևս 2 ընտանիքի անդամ օգտվում են ինտերնետից հարցվածների 29,1%-ի մոտ: Մեկ հոգի՝ 28,2%, ոչ ոք՝ 21,7%, երեք հոգի՝ 17,6% (Գիրք N 1, էջ 41):

Ոչ ոք պատասխանի 21,7%-ը ավելի շուտ ընտանիքի կազմի, այլ ոչ թե ինտերնետի նկատմամբ հետաքրքրության բացակայությունն է:

Ուրախալի և թերևս մի փոքր անսպասելի էր **տանն ունեցած համակարգիչների քանակի** ուսումնասիրության արդյունքը:

Առաջին տեղում է տանն առկա երկու համակարգիչ ցուցանիշը՝ 51,1%: Մեկ համակարգիչ ունեն 44,6% ընտանիքներ:

Չավելշտալի է 7 (յոթ) համակարգիչ գրանցած երևանյան մի բնակչի արդյունքը: Երեք համակարգիչ ունեն 3,7%-ը:

Կարևոր էր նաև **Երևանից օգտվողներին միանալու տիպի** ուսումնասիրությունը:

Անվիճելի առաջատարը DSL միացման միջոցով ինտերնետից օգտվողների չափանիշն է՝ 30,2% ըստ պատասխանների և 32,7% ըստ օգտվողների թվի:

Նախապատվությունը Անլար (WiFi) և Անլար (3G/4G) միացմանը տալիս են համապատասխանաբար 17,6% և 21,5% ինտերնետից օգտվողներ:

Կարելային օպտիկան՝ 21,1%, մի փոքր զիջում է անլար (3G/4G) տարբերակին:

Ինտերնետին կապվածության հետաքրքիր դիտարկում էր **ինտերնետում օրեկան անցկացրած միջին ժամանակի չափաբաժինների** ուսումնասիրության արդյունքները.

Երեքից վեց ժամ՝ 32,9%

Վեց ժամից ավելի՝ 27,1%

Մեկից երեք ժամ՝ 16,9%

Այսինքն, մեր ազգաբնակչության ինտերնետից օգտվողների 60%-ը ինտերնետից օգտվում են ավելի քան երեք ժամ:

Սա երևի թե, ցավոք, այլ հետաքրքրությունների բացակայությունն է:

Այն, որ **Bee-line-ը շուկայի առաջատարն** է, կարելի էր կանխատեսել՝ ներկայությունը շուկայում 36,0% (Գիրք N 1, էջ 49): Սակայն ուշագրավ է, որ միայն լարային միացման՝ 24,0% չափաբաժինը գերազանցում է երկրորդ տեղում գտնվող Vivacell-MTS (անլար) միացման ցուցանիշը՝ 21,1%-ին:

Orange-ի (անլար) ցուցանիշը (19,3%) կարող էր և ավելի բարձր լինել, եթե շուկա չմտներ մեծ հավակնություններ ունեցող Ucom-ը (10,8%):

Շուկայում մեծ հեղինակություն վայելող Arminco-ն մի փոքր ետ է մնում Ucom-ից՝ 10,5%:

Հարցաթերթիկում նշված ԻՄՍ 9 (ինը) կազմակերպություններից բացի նշված էր նաև “Այլ” պատասխանի հնարավորություն, որի չափաբաժինը՝ 3,8%, կգնահատեն ինտերնետ շուկայի մասնագետները: Ավելի հաճախ հիշատակվել են Interactive-ը, “Երևան կապ”-ը, Վիռոնետը, Կոմպլարը, Բիոնետը:

Ինտերնետից օգտվողների կողմից իրենց **անլար քարտը** հաճույքով տրամադրում են ուրիշին քարտ ունեցողների 76,8%:

23,2%-ը պարզ չէ, չէ՞ն տրամադրում, թե ընտանիքի մյուս անդամների մոտ ցանկություն չկա նրանց քարտից օգտվել:

ՓՆՏՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԿԱՅՔԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ

Քանի որ Հայաստանի ինտերնետ օգտագործողների մոտ նույնպես Google-ն է ամենաախընտրած փնտրող համակարգը, կասկած չէր հարուցում: Ուսումնասիրությունն ուղղակի փաստեց նրա չափաբաժինը՝ 77,4%:

Yandex-ից օգտվում են 11,8%: Այստեղ ավելի ուշագրավ է պարզել “Այլ” փնտրող համակարգերի 10,8% չափաբաժնի կառուցվածքը:

Ինչ վերաբերվում է որոշ հանրահայտ կայքերին (Աղ. N 28, Գձ. N 62), ապա Youtube-ի առաջնությունը՝ 28,6% չափաբաժին ըստ պատասխանների և բացարձակ բարձր արդյունք՝ բաշխում 94,6% ըստ օգտագործողների թվի, խոսում է Հայաստանյան ինտերնետ օգտագործողների հետաքրքրությունների և ճաշակի մի փոքր սեղմ շրջանակի մասին:

Հարցաթերթիկում 3 պատասխանների հնարավորությունը Yahoo-ին նույնպես հնարավորություն էր տվել առանձնանալ բարձր արդյունքով՝ 25,3% ըստ պատասխանների թվի և 83,7% ըստ բաշխման:

Ուրախալի է Wikipedia-ի 22,7% և 75,1% չափաբաժինները ինտերնետ օգտագործողների մոտ:

Amazon-ի արդյունքն է համապատասխանաբար՝ 16,2% և 53,8%:

Հետաքրքիր է, որ BitTorrent Network նշել են հիմնականում արական սեռի ներկայացուցիչներ՝ հարցաթերթիկների 9,9%:

Սոցիալական ցանցեր՝ թերևս կապվածության և կախվածության ևս մի դրսևորում:

Youtube-ը շարունակում է իր հաղթարշավը՝ 23,1% ըստ պատասխանների և 87,0% ըստ օգտագործողների թվի:

Osnoklassniki-ի համապատասխանաբար 21,5% և 81,1% ցուցանիշը բարձր է Facebook-ի ցուցանիշից՝ համապատասխանաբար 19,8% և 74,7%:

Այս եռյակին շատ մոտ արդյունքներով հետևում են linkedin-ը (7,7% և 29,0%), V Kontakte-ն (7,4% և 28,0%) և Հայաստանում ոչ այդքան մասսայականություն վայելող Twitter-ը (7,1% և 26,9%) չափաբաժիններով:

□Այլ□ սոցիալական ցանցերին բաժին են ընկնում ինտերնետ օգտագործողների 7,8% ըստ պատասխանների և 29,7% ըստ օգտագործողների թվի:

Zhivoy Zhurnal-ի արդյունքը հարցաթերթիկում եզրափակում է սոց. ցանցերի ցանկը: **“Ի՞նչ նպատակով եք օգտվում ինտերնետից”** հարցադրումը ենթադրում է ինտերնետից օգտվողների նախասիրությունների արտացոլումը (Աղ. № 32, 33 Գձ. № 66, 67, էջ 9-12):

“Նորությունների” բացարձակ բարձր արդյունքը՝ ինտերնետից օգտվողների 65,7%, ոչ միայն նկատելիորեն առաջ է “Շփում սոց. Ցանցերում”՝ 59,7%, այլ գերազանցում է անգամ “Երաժշտություն”, “Կինո/վիդեո” և “Չաթ կամ մեսենջեր” հարցադրումներից:

“Մասնագիտական տեղեկատվություն” են որոնում ինտերնետից օգտվողների 42,6%-ը, “Գիտական տեղեկատվություն”՝ 37,4%-ը:

“Աշխատանքի որոնում” նույնպես բարձր՝ 39,0% ցուցանիշը գալիս է ամրագրելու երկրի սոցիալ-տնտեսական մտահոգիչ վիճակը:

“Դասեր (E-learning)”՝ 36,6% ցուցանիշը ևս մի անգամ համադրելով “Մասնագիտական տեղեկատվության” և “Գիտական տեղեկատվության” ցուցանիշների հետ, կարելի է ուրախությամբ փաստել, որ սերը ուսման նկատմամբ արտացոլվել է ուսումնասիրության արդյունքներում և դեռևս պահպանվում է:

Ընդհանրապես մեր հայրենակիցների ինտերնետից օգտվելու նախասիրությունները ամփոփված Գժ. 67-ում (էջ 12) շատ խոսուն, տեսանելի և մասնագիտական (տնտեսագիտական, քաղաքագիտական, հոգեբանական) շատ լուրջ վերլուծություններ և հետազոտություններ է ակնկալում:

Ինտերնետ-դոմենների, այն է՝ երկրների տիրույթից օգտվելու պատկերը հետևյալն է.

.am – 22,7% և 83,1%

.com – 22,3% և 82,0%

.ru – 17,4% և 64,0%

Այս եռյակին հաջորդում են .net-ը՝ 8,6% և 31,4% և .org-ը՝ 7,8% և 28,7%, համապատասխանաբար ըստ պատասխանների և ինտերնետից օգտվողների թվի:

Մեր հայրենակիցների հետաքրքրությունը այսքանով չի սահմանափակվում և որոշակի ուշադրության են արժանացնում նաև .biz-ին, .info-ին և .co-ին:

“Ինտերնետից օգտվելու լեզվի” մասին.

Այս վերլուծությունը շատ խորքային արմատներ ունի: Նա մեզ տանում են դեպի խորհրդային շրջանի կրթական համակարգ, երբ հայերենից բացի, բոլոր կրթական հաստատություններում, մասնավորապես դպրոցներում, պարտադիր ուսուցանվում էր ռուսերենը և ևս մեկ օտար (հիմնականում անգլերեն և գերմաներեն):

Դիտարկվող ուսումնասիրության արդյունքներով պատկերը այսպիսին է՝

Հայերեն – 32,3%

Անգլերեն – 28,1%

Ռուսերեն – 26,1%

Անգլերեն լեզվով ինտերնետ կայքերից և որոնողական համակարգերից օգտվողների մի փոքր ավելի բարձր արդյունքը ռուսերենի նկատմամբ թերևս գալիս է նաև նրանից, որ տեղեկատվական և որոնողական (գիտական, տնտեսական, զվարճանք, ճամփորդություն) կայքերի ճնշող մասը անգլերեն է:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՄ ՖԻՐՄԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ցավոք, դեռևս շատ ցածր է անձնական և անգամ ֆիրմային կայք ունեցողների թիվը՝ ինտերնետից օգտվողների, տեսականորեն համակարգիչ ունեցողների ընդամենը 7,7%-ը:

Այստեղ հարցման ընթացքում բացահայտվեցին լուրջ խնդիրներ՝ մոլորություններից մինչև անտեղյակություն:

Մեր հայրենակիցներից շատերը ոչ միայն ծանոթ չեն դոմեն, հոստինգ անվանումներին, այլ նաև չեն պատկերացնում, որ իրենք նույնպես հեշտությամբ կարող են ձեռք բերել դրանք: Անտեղյակ են մատուցվող ծառայություններին գներին:

Այստեղ թերևս լուրջ մասնագիտական գովազդային արշավի կարիք է զգացվում: Կան նաև այնպիսիները, ովքեր գիտեն այս ամենի մասին, սակայն չեն ցանկանում .am տիրույթի դոմեններ ձեռք բերել, մասնավորապես գնային և քաղաքական (կայքերի անվտանգության ապահովություն) պատճառներով:

Այստեղ թերևս իր դերն ունի նաև այն, որ .com տիրույթը ոչ միայն ավելի մատչելի է գնային, այլ նաև մեր հայրենակիցների անուն ազգանունների առումով ավելի ազատ է:

Քիչ չէ նաև այն մտահոգությունը, որ .am-ը շատ ավելի թույլ է պաշտպանված հակերային հարձակումներից մեր սահմանակից երկրի կողմից, քան .com, .info, .ru և այլ տիրույթները:

ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ (hosting)

Այս ուսումնասիրությունը շարունակությունն է նախորդի՝ նորից գնային և անվտանգության շարժառիթների, մասնագիտական գովազդային արշավի, դոմենային անվանումների և հոստինգի վաճառքի մարտավարության որոշակի փոփոխության անհրաժեշտություն:

Իսկ ուսումնասիրության արդյունքները հետևյալն են՝

Ամերիկյան հոստինգից օգտվում է մեր հայրենակից անձնական և ֆիրմային կայք ունեցողների 27,7%-ը, Ռուսաստանի՝ 26,1%-ը, Եվրոպական երկրների հոստինգ են նախընտրում 20,0%-ը, Հայաստանյան հոստինգ օգտագործում են 15,4%-ը:

Բավականին բարձր՝ 10,8% չափաբաժին ունի նաև □Այլ□ պատասխանը:

Իհարկե, ուսումնասիրության մեջ կայքեր ունեցողների փոքր թվաքանակը՝ 7,7%, որոշակիորեն դժվարացնում է վերջնական եզրահանգման գալ և այստեղ թերևս լուրջ հարցման անհրաժեշտություն կա:

Հայկական կայքեր

Հինգ պատասխանի հնարավորությունը ուշագրավ պատկեր ձևավորեց: Պատասխաններում ընդհանուր առմամբ ավելի քան 1500 կայք է հիշատակված: Չնայած հանգամանակից վերլուծությանը (էջ 38), այնուամենայնիվ ևս մի փոքր մեր հայրենակիցների նախընտրած կայքերի և նրանցից օգտվելու պատճառների վերաբերյալ:

Ճնշող, միևնույն լրատվական կայքերի թվարկում՝ News, Asekos, Blognews, Azatutyun, lin, Lragir...

Մի փոքր զիջում են զվարճանք, երաժշտություն, կինո/վիդեո պարունակող հայկական և ոչ միայն “.am” տիրույթի կայքերը՝ Bravo, Hayojax, Hip-hop, Hamovhotov, Hamovhayer, Erkusov, Auto, Acher, Karginhayer, Adibudi...

Ուրախալի է Gov, Mfa, Mes, Mineconomy, Police, Arlis, Mobilecentre, Megabit, Armstat, President կայքեր հաճախելու դրական տենդենցը:

Գիտահանրամատչելի, ուսումնական որակով, թարգմանչական (մասնավորապես երգերի թարգմանություն), նեղ մասնագիտական, ծրագրեր և ծրագրային ապահովում ներառող, հանրագիտարանային, բարձրակարգ արվեստ... հիմնականում այս ֆորմատի կայքեր են ցանկանում “.am” տիրույթում տեսնել մեր հայրենակիցները:

Հետաքրքիր և անսպասելի առաջարկներ էլ կան՝

- Նախագահը online ռեժիմով ամիսը մեկ անգամ պատասխանի հասարակական հնչեղություն ունեցող հարցերին
- Մարդաշատ վայրերում՝ առևտրի խոշոր օբյեկտներ, կինո, թատրոն, հրապարակ, ստադիոն, դրվեն ուղիղ միացման հնարավորություն ունեցող, թե՛ գիծ տարբերակով համակարգիչներ, որոնք միացված լինեն դեպի Նախագահի աշխատակազմ,

Խորհրդարան, Կառավարություն, Ոստիկանություն, Պետեկամուտների կոմիտե, Քաղաքապետարան:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Հետազոտությունը ցույց տվեց, որ կանայք (հիմնականում 46-ից բարձր տարիքի) շատ ավելի վատ են տեղեկացված իրենց կողմից օգտագործվող ինտերնետի տվյալների մասին (ԻՕՄ, արագություն, ծախս) և շատ ավելի քիչ ժամանակ են տրամադրում ինտերնետին, քան իրենց հասակակից տղամարդիկ:

Ինտերնետից երկար ժամանակ օգտվողները նախընտրում են աշխատել Desktop-ով կամ նոութբուքով, չնայած հնարավորություն ունեն օգտվել նաև բջջային հեռախոսից, պլանշետից կամ սմարտֆոնից:

Մեծահասակ՝ 61-ից բարձր տարիքի տղամարդիկ սիրում են meteo-tv. եղանակի տեսություն, քարտեզներ դիտել և ճանապարհորդական ինֆորմացիա ստանալ: Մարզերում՝ հիմնականում վարչական շրջաններում, ամենանախընտրելին Skype-ն է և Odnoklasniki-ն:

Թե կին և թե տղամարդ, որոնց տարիքը 46-ից բարձր է, ինտերնետից օգտվելիս նախընտրում են ռուսերենը և ընդհանրապես չեն այցելում այլ օտար լեզուներով կայքեր:

Միջին տարիքային սեզմենտը հավատում է Online առևտրի կայքերին, սակայն որշակի վերապահումներով:

Աշխատանք փնտրող երիտասարդությունը (և ոչ միայն) կորցրել է հավատը աշխատանքի առաջարկների հայտարարություն պարունակող կայքերի նկատմամբ, չնայած հաճույքով գրեթե ամեն օր նորից ու նորից այցելում են:

Նեղ մասնագիտական, ուսումնական, որոնողական համակարգեր պարունակող կայքերը լեզվի հետ առնչվող խնդիրների պատճառով հասանելի չեն մեր հայրենակիցներից շատերին: Նրանց հետաքրքրում է նաև այն երգերի, ֆիլմերի բառերը, որոնք ունկնդրում և ակնդրում են:

Դիզայն, ֆլորիստիկա, ձևավորում, կոսմետիկա, ժամանց, մի փոքր էրոտիկ կայքեր տեսնել ցանկացողները նույնպես քիչ չեն: Հետաքրքիր է, որ էրոտիկ կայքեր տեսնելու ցանկություն ունեն 46 տարիքը գերազանցող թե տղամարդիկ և թե կանայք: Այս տարիքային խմբին հետաքրքրում է նաև շփումը սոցիալական ցանցերում:

Հետազոտության ընթացքում գրանցված պատասխանները ցույց են տալիս նաև սոց. ցանցերի, մասնավորապես Facebook-ի նկատմամբ հետաքրքրության նվազում: Մինչև 46 տարեկանների մոտ դեռևս գերակշռում է Odnoklasniki-ը:

Շոու բիզնեսին, սկանդալային տեղեկատվությանը, սպորտային հաղորդումների երկրպագուները նույնպես շատ են՝ 18-ից 45 տարեկան թե կանանց և թե տղամարդկանց մեջ:

Շատերը չնշելով ուղղությունը՝ ցանկանում են տեսնել □.am□ տիրույթում կոնկրետ ուղղվածությամբ կայքեր, առաջին օգնության կայքեր:

Բիզնեսին, գործարարությանը աջակցող կայքեր, մասնավորապես, բիզնես դասընթացներին առնչվող կայքեր ցանկացողների թիվը նույնպես մեծ է:

Ժամանակի ոգուն համահունչ և բարոյական նորմերի մեջ, ընտանիքի և երեխաների դաստիարակությանը վերաբերվող, ինչպես նաև զվարճանքի նոր դրսևորումներով (խաղեր, տեսահոլովակներ, երգեր) կայքեր տեսնել ցանկացողները նույնպես քիչ չեն:

Հատկանշական և ուրախալի է նաև այն, որ գիտահանրամատչելի, հավաստի, ստուգված տեղեկտվություն պարունակող կայքեր տեսնել ցանկացողների թիվը բավականին մեծ է:

Անփոփելիով հետազոտության արդյունքները՝ կարելի է փաստել, որ համակարգիչը, ինտերնետը դարձել են մեր առօրյայի, մշակույթի անբաժանելի մասը:

Եվ այսօր անգամ ՀՀ-ում արձանագրված ինտերնետի թափանցման 56,9% ցուցանիշը գոհացուցիչ լինել չի կարող:

Հետաքրքիր գրառում էր կատարել մի կին՝ 46-60 տարիքային խմբում և բարձրագույն-հումանիտար կրթությամբ.

“Համակարգիչ ունենալը և ինտերնետից օգտվելը պետք է Հայաստանում դարձնել սահմանադրական իրավունք՝ մարդը ծնված օրից 12 տարի հետո իրավունք ունի և պարտադիր պետք է անվճար համակարգիչ և որոշակի չափի (ծավալի) ինտերնետից օգտվելու հնարավորություն ստանա: Ես ուզում եմ տեսնել նման Հայաստան”:

“Նոյ-Ֆիրմ”-ի աշխատակազմը սիրով միանում է հարցմանը մասնակցած 1520 մեր հայրենակիցներից իր լավատեսությամբ փայլող այդ կնոջ կարծիքին՝ ինտերնետն այսօր, ինչպես օդը, անհրաժեշտ է բոլորին:

Մենք նույնպես ուզում ենք տեսնել նման Հայաստան: